Վերապատրաստող կազմակերպություն՝ Վարդանանք կրթահամալիր

Նախագծային աշխատանք

Առարկա՝ ***Հայոց պատմություն***

Թեմա՝ ***Իսրայել Օրին և ազատագրական շարժումը***

Կատարող՝ ***Ն. Խաչատրյանի անվան հմ 113 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Շուշան Եգորյան***

Ղեկավար՝ ***Նունե Ասրյան***

2022թ.

Բովանդակություն

Ներածություն 3

1. Իսրայել Օրին և նրա դիվանագիտությունը 5

2. Իսրայել Օրին և հայ ազատագրական շարժումները 14

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Միտքն է առաջնորդում գործողությունը: Վեհ մտքերը հղանում են վեհ մարդկանց մոտ: Ազգին նվիրվելը, ազգի համար ապրելն ու մարտնչելը ոչ բոլորին է տրված: Տեսնել ապագան, կռահել անվտանգության ապահովումը, ճիշտ կշռադատելով հասկանալ, թե ով է քո թշնամին և և ով կարող է դառնալ քո բարեկամը: Միայն հանաճարեղ ուղեղի պայծառ հնարավորություններն ու ազգանվեր մտածելակերպն էին առաջնորդում այն մարդուն, ով իր տանջանքներն անտեսելով՝մտածում էր միայն Հայ ազգի ազատագրման և բարեկեցության մասին: Այդ մարդն էր Իսրայե Օրին, ում չեն մոռանա սերունդները, որոնք ստեղծել ու շարունակում են հայոց աշխարհի պատմությունը:

Սեղմված լինելով թշնամի երկրների ճիրանների մեջ, Հայաստանը հուսո աստղ էր որոնում քաղաքական մի բարդ իրավիճակում, երբ Եվրոպամ ձգտում էր ուժեղացնել իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Ռուսաստանն էլ խրված էր երկարամյա պատերազմի մեջ Շվեդիայի դեմ:

Իսրայել Օրին իր գիտակցական կյանքը նվիրեց Հայաստանի ազատագրմանը՝ փորձելով միավորել ազգերին և ժողովուրդներին այդ մտքի շուրջ: Դժվարին այդ ժամանակաշրջանում միայն նման միտքը արդեն վտանգ է պարունակում իր մեջ, իսկ Օրիի համար վտանգված էր միայն Հայաստանը, և իր հայրենիքի անկախությանը հասնելու համար հայ ազգի նվիրյալը ջանք ու եռանդ չխնայեց:

Իսրայել Օրին հայ ազատագրական պատմության անկրկնելի դեմքերից է: Նա, փաստորեն, առաջին հայ դիվանագետն է, ով վերանայեց Հայաստանի ազատագության և բանագնացության հին ուղին և փորձեց նոր հիմքեր ստեղծել Հայաստանի ազատագրության համար:

Օրին իր գործունեությամբ հանդես եկավ մի ժամանակ, երբ հայ ժողովրդի արևելյան հատվածը սկսել էր պայքար մղել ֆեոդալական և բուրժուական կարգերի դեմ, որպեսզի կարողանա տիրանալ իր ազատությանը, որից զրկվել էր դարեր առաջ:

Հայաստանը, գտնվելով շահական Պարսկաստանի իշխանության տակ, կառավարվում էր կենտրոնական իշխանության կողմից նշանակված պարսիկ խաների կողմից: Սկզբնական շրջանում հայերի վիճակը Պարսկաստանում քիչ, թե շատ տանելի էր, սակայն վիճակը վատթարացավ այն բանից հետո, երբ Պարսկաստանը ընկավ տնտեսական ճգնաժամի մեջ:

Արդեն այդ ժամանակաշրջանում Եվրոպական երկրները սկսել էին միջամտել Արևելյան երկրների ներքին գործերին, յուրաքանչյուրը փորձում էր իր համար ազդեցության գոտի ստեղծել և ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Հենց սա է պատճառը, որ ավելի էր բարդացել տարածաշրջանի դրությունը, իսկ

Պարսկաստանը, հայտնվելով եվրոպական երկրների վեճերի կիզակետում, հայտնվել էր դժվարին դրության մեջ: Միանգամից ենթարկվելով մի քանի երկրների, հատկապես Ֆրանսիայի ազդեցությանը, Պարսկաստանը ըստ էության կորցրել էր ինքնուրույն գործելու հնարավորությունը, նամանավադ, որ տնտեսական ճգնաժամին հաջորդել էր քաղաքական ճգնաժամը և սկսել էր քայքայվել Սեֆյան Պարսկաստանի պետական ապարատը և երկիրը ղեկավարում էին հոգևորականները և ներքինիները:

Հենց Պարսկաստանի տիրապետությունից էլ Օրին ցանկանում էր ազատագրել իր հայրենիքը:

Արևելյան Հայաստանը արդեն դարեր շարունակ գտնվում էր Պարսկաստանի տիրպետության տակ և հալածվում էր անազատության մեջ: Օրին ցանկանում էր հույս առաջացնել ժողովրդի մեջ, հավատ ներշնչել, որ մոտ է այն օրը, երբ հայերն էլ կունենան իրենց ազատ ու անկախ Հայաստանը: Եվ այս նպատակին հասնելու համար նա չխնայեց ջանք ու եռանդ: Օրին եղավ Եվրոպայում, սովորեց մի քանի լեզուներ՝ ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն: Ծառայության մտավ ֆրանսիական բանակում և կատարելապես տիրապետեց ռազմական արվեստին: Նա մոտ հարաբերություններ հաստատեց Գերմանիայի Պֆալց իշխանության կայսերընտիր իշխան Հովհան Վիլհելմի հետ, համագործակցեց նրա հետ, և գերմանացի ազդեցիկ իշխանը, ով ազգակցական կապեր ուներ Եվրոպայի հզոր պետությունների արքայական ընտաիքների հետ, իսկապես մեծ օգնություն ցուցաբերեց Օրիին թե նրան ոգևորելու, և թե մի շարք գործնական տեսանկյուններից:

Սակայն Օրին չէր գտնում, որ իր հայրենիքի համար բավարար է միայն Հովհան Վիլհելմի օգնությունը: Նա բանակցություններ վարեց Տոսկանայի դքսի, Ավստրիայի Լեոպոլդ Կայսեր, և իհարկե Ռուսաց մեծ ցար Պետրոս Առաջինի հետ:

Իսրայել Օրիի գործունեությունը, իմ կարծիքով, անգնահատելի է: Նրա մեծությունը կայանում է նրանում, որ այս գործչի համար կարևորը խոսքերը չէին, նա ավելի կաևոր էր համարում գործը: Նա առաջին հայ դիվանագետն էր, առաջինը, ով կարողացավ խոսել թե Եվրոպայի, և թե Ռուսաստանի իշխողների հետ դիվանագիտական լեզվով, դիվանագիտական գրագության միջոցով: Օրին առաջինն էր, ով հասկացավ, որ չարժե հույսեր կապել եվրապական պետությունների հետ, առաջինն էր ով հասկացվ այդ հույսերի անիմաստ ու խաբուսիկ լինելը:

Իսայել Օրու գործունեությունը ուսումնասիրել են նշանավոր պատմաբաններ, գիտնականներ:

Իսրայել Օրու գործունեության նկարագիրը տվել է Ա.Գ. Աբրահամյանը իր «Իսրայել Օրի» աշխատության մեջ, որտեղ մանրամասնորեն ցուցադրված են Իսրայել Օրու գործունեության շրջանները, հայրենիքի փրկությանն ուղղված քայլերը:

Նա հայտնաբերել է մի շարք արժեքվոր վավերագրեր, որոնք նոր տեղեկություններ են հաղորդել Օրիի անցած ճանապարհի մասին:

Օրիի գործունեության բարձր գնահատականն է տվել հայ պատմագիտության վաստակաշատ գիտնական Լեոն, ով Օրիին համարում է Հայաստանի ազատագրության «մեծ ռահվիրան»:

Ամերիկահայ պատմաբան Քյուրտյանը, Վատիկանի արխիվում հայտնաբերեց ու հաստատեց Օրիի գործունեության հետ կապված մի շարք վավերագրեր, որոնք մինչև այդ անհայտ տեղեկություններ են հաղորդում Օրիի դիվանագիտության մասին: Քյուրտյանը մեծ քննադատությամբ է մոտեցել Օրիի գոծունեությանը և որոշ դրվագներում բացասաբար ներկայացրել նրան:

Դյուրին չի եղել Իսրայել Օրիի դիվանագիտական որոնումների ուղին. Նա այդ ճանապարհին հանդիպել է բազմաթիվ փորձությունների և դժվարությունների: Բայց լեռնցու անհողդողդ կամքը երբեք չի ընկճվել: Նա հաղթահարել է իր առջև ծառացած բոլոր դժվարությունները և համառությամբ շարունակել է իր որոնումները՝ դրական արդյունքի հասնելու համար:

1. Իսրայել Օրին և նրա դիվանագիտությունը

Իսրայել Օրին հայ ազատագրական մտքի պատմության ամենակարկառուն դեմքերից մեկն է: Նա, փաստորեն, առաջին հայ դիվանագետն է: Նա առաջինն էր, ով իր վրա վերցրեց Հայաստանի ազատագրության հին և անհեռանկար ուղին, դուրս հանեց այն փակուղուց, ճշտեց Հայաստանի ազատագրության ուղեծիրը և վերջնականապես Ռուսաստանի հետ կապեց հայ ժողովրդի ազատագրության հույսերը և ակնկալությունները:

Իսրայել Օրին սերում է նշանավոր Պռոշյանների տոհմից: Ոչ մի տեղ հիշատակված չէ նրա իսկական հայրենիքը՝ ոչ գավառը, ոչ գյուղը:

Սպահանում գործող եզուիտ կրոնավորներից մեկը, իր աշխատության մեջ խոսելով Օրու մասին, նշում է, որ նա ծնունդով Կապանլու (Kapanlu) է, այսինքն՝ Ղափան գավառից[1]: Հայտնի է, որ Պռոշյան տոհմը սեփական կալվածքներ ուներ Վայոց ձորում (Դարալագյազ): Նրա ընտանիքը շատ ազնվատոհմ էր համարվում Հայաստանում:

[1] Լեո, «Հայոց պատմություն» , երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան 1973, էջ 31

Օրին անծանոթ անուն է: Ըստ Քրիստափոր Օհանյանի այն պետք է հասկանալ Ավրի կամ Յավրի[2]: Սակայն ժամանակակից գրականության մեջ երբեք նրա անունը չի գրվել Ավրի կամ Յավրի: Հավանաբար դա էր իր մականունը, որը Եվրոպայում փոխվեց, գրվեց և դարձավ Օրի:

Պոֆեսոր Հեյգելը հայտնում է, որ գերմանական փաստաթղթերի մեջ 1689թ.-ի դրությամբ նշված է 40 տարեկան, այսինքն՝ նա ծնվել է 1649թ.: Սա կարող է ճիշտ լինել, քանի որ Հեյգելի աղբյուրները դատական վկայություններ են:

Իսրայել Օրու գործունեության առաջին քայլերը սերտորեն կապված են 1678թ. Էջմիածնում գումարված գաղտնի ժողովի հետ: Էջմիածնի ժողովի նախաձեռնողն էր Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը; Ուշագրավ է, որ Մոսկվայում Պետրոս Մեծի հետ հացազրույցի ժամանակ Օրին որպես գաղտնի ժողովի անցկացման վայր նշել է ոչ թե Էջմիածինը, այլ Երևանը: Սրանով Օրին ցանկանում էր ցույց տալ, որ Հայաստանի ազատագրման հարցը քննարկվել է ոչ թե հոգևորականության նեղ շրջաններում, այլ նրա նախաձեռնողները եղել են Երևանի և Հայաստանի այլ վայրերի աչքի ընկնող գործիչները[3]: Էջմիածնի գաղտնի ժողովում որոշում է ընդունվել դիմել ռուսաց ցարին, իսկ եթե այդ չհաջողվի, դիմել Ավստրիայի Լեոպոլդ կայսրին: Դեպի Եվրոպա ուղևորության ժամանակ Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ հայոց պատվիրակությունը երկար ժամանակ անցկացրեց Վրաստանում, և դա աննպատակ չէր: Բախտակից հայ և վրաց ժողովուրդները միշտ միասին են եղել ազատագրական պայքարում, համագործակցել են:

Հարկ է նշել, որ իր գործունեության ընթացքում Օրին գաղտնի է պահել իր ծննդավայրը: Դրա պատճառը այն չէ, որ ցանկանում էր պաշտպանել իր ընտանիքը, քանի որ առանց այդ էլ հայտնի էր իր՝ Պռոշյանների տոհմից լինելը: Ուղղակի, եթե ոչ ոք չիմանար նրա անցյալը, նա կարող էր շատ հանգիստ ներկայացնել իրեն Պռոշյան, նույնիսկ արքայազուն:

Զաքարիա Ագուլիսեցին Հակոբ Ջուղայեցու՝ Վրաստան գնալը նեկայացրել է իբրև փախուստ: Որոշ ուսումնասիրողներ Ջուղայեցու մեկնումը համարում են պտույտ հանգանակության համար՝ պարտքերը վճարելու նպատակով: Հակոբ Ջուղայեցու պատվիրակությունը Եվրոպա էր մեկնում գաղտնի, և պարզ է, որ նա իր մեկնման համար պատրվակ պետք է ներկայացներ հանգանակություն հավաքելը: Կարնո փաշան հավանաբար արգելք է հանդիսացել Ջուղայեցու հանգանակությանը, մինչև նրան հրաման է արձակվել ազատ թողնել կաթողիկոսին: Կաթողիկոսը վկայում

---

[2] Յ. Քյուրտյան, «Իսրայել Օրու պատմաքննական ուսումնասիրությունը», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1960, էջ 10

[3] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 27

է, որ ինքը Երզնկայով գնացել է Տիգրանակերտ՝ հանդիպելով Հայաստանի հայաշատ քաղաքները և դրամ է հավաքել: Նա մտադիր էր Տիգրանակերտից անցնել Սեբաստիա և Թոգաթ, այնտեղից էլ՝ Պոլիս[4]: Պոլսից մի դատական հսկող պետք է ընկերակցեր Ջուղայեցուն, մինչ վերջինս կշարունակեր դրամ հավաքել հայաշատ վայրերից:

Վատիկանում նույնպես տեղեկացված են եղել Հակոբ կաթողիկոսի՝ Հռոմ գնալու մտադրության մասին:

Պատվիրկությունը Պոլիս է ժամանել 1679 թվականի հոկտեմբերի 25-ին, հետևաբար սխալ է այն կարծիքը, որ պատվիակությունը Վրաստանում է մնացել 2.5 տարի: Պոլսում պատվիակությունը մնացել է մինչև կաթողիկոսի մահը, ինչը տեղի է ունեցել 1680թ, օգոստոսի 1-ին[5]: Պոլսում պատվիրակությունը բանակցություններ է վարել Արևմտաեվրոպական որոշ երկրների դիվանագետների հետ: Պտվիրակությունը տեսակցություններ է ունեցել նաև Պոլսի հայ բնակչության ներկայացուցիչների հետ, որոնցից մեկը՝ բանաստեղծ և պատմագիր Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը մեծ աջակցություն է ցույց տվել պատվիրակության գործունեությանը[6]:

Պոլսում Ջուղայեցին բանակցություններ է վարել նաև կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչների հետ:

Դժբախտաբար պատգամավորությունը չկարողացավ կատարել Էջմիածնի խորհրդաժողովում ստանձնած պարտավորությունները, որովհետև Հակոբ Կաթղիկոսը մահացավ 1680 թվականի օգոստոսի 1-ին: Տեղեկություններ հասան Կ.Պոլիս, որ Վրաստանի ապստամբությունից հետո պարսիկ բռնակալները սոսկալի վայրագություններ և հարստահարություններ են սկսել Վրաստանում և Հայաստանում: Պատգամավորության անդամները ստիպված եղան վերադառնալ: Նրանցից միայն մեկը՝երիտասարդ Իսրայել Օրին էր, որ շարունակեց իր ճանապարհը դեպի Եվրոպա:

Օրին Եվրոպա մեկնեց դատարկ ձեռքով: Փաստորեն օտար և անծանոթ աշխարհ ընկած և եվրոպական լեզուներին չտիրապետող երիտասարդ բանագնացի առաջ փակ էին եվրոպական աքունիքների դռները, մնում էր, որ նա բնակություն հաստատեր որևէ երկրում, հարմար աշխատանք գտներ՝ իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար:

---

[4] Յ. Քյուրտյան, «Իսրայել Օրու պատմաքննական ուսումնասիրությունը», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1960, էջ 12

[5] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 36

[6]Պրոֆ Ս.Գ. Պողոսյան, «Հայ ժողովրդի պատմություն», հատոր II, էջ 266

Մինչև Ռուսաստան գալը Օրին Եվրոպայում մնացել է շուրջ 20 տարի: Հակոբ Կաթողիկոսի մահից հետո նա Կ.Պոլսից մեկնում է Վենետիկ և այնտեղ է մնում շուրջ 3 ամիս:1681թ. Վենետիկից մեկնեց Ֆրանսիա, շուրջ 6 տարի այստեղ խանութպան աշխատեց: Ֆրանսիայում նա անցնում է զինվորական ծառայության, դառնում է ֆրանսիական բանակի հեծելազորի կապիտան: Մասնկցում է ֆրանս-անգլիական պատերազմին, գերվում անգլիացիների կողմից: Ազատվելով անգլիական գերությունից՝ Օրին բնակություն է հաստատում Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում, որը Պֆալցի իշխանության մայրաքաղաքն էր[7]: Պֆալցը հանդիսանում էր Գերմանական պետության մեջ մտնող բազմաթիվ իշխանություններից մեկը: Այդ իշխանությունները գրեթե անկախ էին, սակայն մտնում էին «Հռոմեական գերմանական կայսրության» մեջ, որը գլխավորում էր Հաբսբուրգյան տոհմից ընտրվող կայսրը: Մայրաքաղաքն էր Վիեննան: Այն ժամանակ, երբ Օրին բնակություն էր հաստատել Դյուսելդորֆում, Պֆալցի Կուրֆյուրստն էր Հովհան Վիլհելմը, ով համարվում էր Եվրոպայի ամենաուժեղ և ազդեցիկ իշխաններից մեկը, քանի որ ազգակցական կապեր ուներ Եվրոպայի շատ իշխող տների հետ[8]: Կուրֆյուրստ էին կոչվում այն իշխանները, ովքեր ընտրում էին կայսրին:

Դյուսելդորֆում ապրած ժամանակ սկզբնական շրջանում Օրին բազմաթիվ զրկանքներ է կրել, քանի որ չէր կարողանում աշխատանք գտնել: Նա նույնիսկ ստիպված է լինում վաճառական դառնալ: Սյունիքի մելիքները, կուրֆյուրստին ուղարկված գրության մեջ ցանկանալով արդարացնել Օրիի՝ առևտրով զբաղվելու իրողությունը որպես քաղաքական գերծչին անպատշաճ զբաղմունք, այն բացատրել են Եվրոպայում նրա ունեցած նյութական ծանր պայմաններով:

Օրին, չունենալով հայ քաղաքական շրջաններից ստացած լիազորագրեր, նույնիսկ ցանկության դեպքում չէր կարող պաշտոնական դիվանագիտական բանակցությունների մեջ մտնել եվրոպական երկրների, այդ թվում և ֆրանսիական արքունիքի հետ: Սակայն նրան չի լքել հայ ժողովրդի ազատագրման գաղափարը, փորձել է դիմումներ հղել Լյուդովիկոս 14-րդին, սակայն անտարբերության է արժանացել: Սկսել է զանազան պերճանքի իրեր վաճառել ֆրանսիական արքունիքի ներկայացուցիչներին: Օրին հուսով էր նրանց միջոցով ընդունելության արժանանալ թագավորի կողմից, սակայն դա նրան չի հաջողվում: Մի ամբողջ տարի նա համառում է, չի վհատվում ,բայց հետո տեսնելով, որ իրեն չեն ընդունում, հետ է վերադառնում[9]:

---

[7] Լեո, «Հայոց պատմություն» , երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան 1973, էջ 31
[8] Նույն տեղում, էջ 32
[9] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 42

Պֆալցում հաստատվելուց հետո Օրին սկսեց ակտիվորեն զբաղվել հայոց ազատգրության գործով՝ համագործակցելով Պֆալցի կուրֆյուրստ Հովհան-Վիլհելմի հետ: Վերջինիս հայտնի էին հայ և վրաց ժողովուրդների՝ Արևմտյան Եվրոպայից ունեցած ակնկալիքները:

Օրիի հանդիպումը Պֆալցի կուրֆյուրստի հետ պատմագիտության մեջ ներկայացվում է փոքր-ինչ պատահական ձևով. առևտրական ինչ-որ մի վեճի կապակցությամբ իբրև թե Օրին լինում է կուրֆյուրստի մոտ, և, օգտվելով պատեհ առիթից, ներկայացնում է նրան հայ ժողովրդի ծանր վիճակը:

Օրին ջանք ու եռանդ չի խնայել շահագրգռելու կյուրֆյուրստին հանձն առնելու հայ ժողովրդի ազատագրության գործը: Օրին Հայաստանը ներկայացրել է որպես հարուստ, բարեկեցիկ երկիր, աշխատել է համոզել նրան, որ հայ ժողովրդի ազատագրությունը կապված չէ մեծ դժվարությունների հետ, որ ժողովուրդը պատրաստ է ապստամբության, անհաժեշտ է մի բարեկամ պետության օգնող ձեռք: Օրին կուրֆյուրստին խոստացել է Հայաստանի գահը: Եվ Հայաստանի թագավոր դառնալու մղումն էր հարկադրում Հովհան-Վիլհելմին առանձին ուշադրությամբ վերաբերվել հայերի քաղաքական բաղձանքներին, խրախուսել նրանց ձգտումները:

Օրիի և Պֆալցի կուրֆյուրստի միջև տեղի ունեցած դիվանագիտական բանակցությունների մասին իրազեկ էին Լեոպոլդ կայսրը և Տոսկանայի մեծ դուքսը: Բանակցությունները գործնական հողի վրա դնելու համար Իսրայել Օրուն առաջարկվում է մեկնել Հայաստան՝ այնտեղից բերելու հայկական քաղաքական և հոգևոր շջանների պաշտոնական դիմումները: Օրին որոշում է կատարել նրանց պահանջները:

Այդ ժամանակաշրջանում Թուրքիան պատերազմի մեջ էր գտնվում Ավստրիայի և եվրոպական այլ պետությունների հետ ու սպառում էր իր ուժերը: 1683թ. Օսմանյան բանակը հաղթական աշավանքներ կազմակերպեց և հասավ Վիեննա: Սակայն լեհական թագավոր Յան Սոբեսկին հարձակում կազմակերպեց թուրքական զորքի դեմ և փառավոր հաղթանակ տարավ: Հաղթվածներն անկարգ փախան՝ թողնելով իրենց զենքերը: Եվրոպայում երեք երկրների (Ավստրիա, Լեհաստան,Վենետիկ) դաշինքը, պաշտպանողական դիրքից դուրս գալով, անցավ հարձակման: 1684թ. Նրանք դեսպանություն են ուղարկում Մոսկվա և առաջարկում Ռուսաստանին միանալ դաշինքին:[10] Դեսպան Բյումբերգը արտասանեց մի նշանավոր ճառ, որի մեջ ներկայացրեց Թուրքիայում տիրող իրավիճակը և Թուրքիայի դությունը համեմատեց «անբուժելի հիվանդ մարդու» դրության հետ[11]:

---

[10] Լեո, «Հայոց պատմություն» , երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան 1973, էջ 33
[11] Նույն տեղում, էջ 33

Օրին, ինչպես երևում է, խուսափում է կաթողիկոսի հետ հանդիպում ունենալուց, քանի որ Էջմիածինը գտնվում էր Երևանի խանի հսկողության տակ, և վերջինիս գործակալները վխտում էին վանքի շրջակայքում, ուստի բավական էր մի փոքրիկ անզգուշություն , որպեսզի Օրին ոչ միայն խափաներ իր ձեռնարկած գործը, այլև վտանգի տակ դներ ինքն իրեն, հետևապես նա բանակցությունների մեջ չի մտել կաթողիկոսի հետ:

Հայ մելիքները նշում էին, որ Նահապետը իր կաթողիկոսական աթռին հասել է կաշառքների միջոցով: Հայ մելիքների հաջողությունը ապահովելու միակ կարևորագույն պայմանը Հայաստանը կաթոլիկացնելն էր: Այս հարցում Էջմիածինը պետք է օգներ մելիքներին, սակայն Նահապետը մերժեց դա անել: Հիասթափվելով Էջմիածնում՝ Օրին ճանապարհվում է Ղարաբաղ: Հովհան Վիլհելմին ուղղված իր նամակներում նա նկարագրում էր իր ճանապարհորդությունը, սակայն որոշ չափազանցություններ էր անում, քանի որ չէր կարող մեկ օրում Էջմիածնից Սիսիան հասնել: Օրին ուղղակի ցանկանում էր տպավորություն թողնել Հովհան Վիլհելմի վրա և ցույց տալ, որ ինքը շատ նվիրված է հայրենիքի ազատության գործին:

Օրին Էջմիածնից շարունակում է իր ճանապարհը դեպի հայրենի գյուղը, որը Վայոց Ձորի Մարտիրոս գյուղն էր[12]: Նա իր ընտանիքի անդամներին չի ասում իր ով լինելը, ուղղակի ասում է, որ Ֆանսիայից է: Երկու օր մնալով հայրենի գյուղում՝ շարունակում է ճանապարհը դեպի Սիսիանի Անգեղակոթ գյուղ:

Անգեղակոթը Սյունիքի կենտրոնական գավառներից մեկն էր, իսկ տեղի իշխանավոր Սաֆրազը՝ Սյունիքի աչքի ընկնող մելիքը: Սյունիքը Հայաստանի այն շրջաններից էր, որը համեմատաբար դուրս էր պարսկական իշխանությունների անմիջական հսկողության տեսադաշտից, և Օրիի համար որպես հայրենի երկրամաս ավելի հարազատ էր և վստահելի: Այստեղ էլ Օրին սկսում է իր աշխատանքը: Գալով Անգեղակոթ՝ Օրին հանդիպում է Անգեղակոթի մելիք Սաֆրազի հետ: Օրին պատկերավոր ձևով է նկարագրել իր հանդիպումը մելիք Սաֆրազի հետ. «Երբ ես մտա նրա տունը,-գրել է Օրին,- նա ինձ տեսնելով պատուհանից՝ մարդ ուղարկեց՝ հայտնելու, թե ինչ էր փափագում: Պատասխանեցի նրան, թե Վրաստանի պարոն Ամիրջանի սուհանդակն եմ և նամակ եմ բերել նրան: Նա ներս տարավ ինձ իր սենյակը, ուր ասացի նրան, թե չեմ կարող ոչինչ ասել, մինչև որ առանձնացած չլինենք: Առանձնանալուց հետո հարցրի նրան, թե չի ճանաչում արդյոք Իսրայել Օրի կոչված մեկին, որին ես տեսել եմ Ֆրանսիայում: Նա պատասխանեց՝ «Այո»: Սրա վրա ես հարցրի՝ «Եթե տեսնեք նրան, կճանաչեք»: Նա ասաց. «Այո. Նա երկար ժամանակ է, որ հեռացել է այստեղից, բայց եթե տեսնեմ նրան, կճանաչեմ»: Ես նրան ասացի.

[12] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 49

«Ահա ձեր ծառան, որ խոսում է ձեզ հետ, նա ինքն է»: Նա չէր ուզում հավատալ, բայց ես նրան ցույց տվի իմ վկայականներից մեկը, որից հետո նա ուրախացավ: Իսկույն ես ցույց տվի նրան կայսրընտիր բարձրության նամակը, հասկացրի բովանդակությունը, որ այնքան բերկրանք պատճռեց նրա սրտին, որ չգիտեր, թե ուր է գտնվում: Մենք պայմանավորվեցինք, որ գաղտնիքը պետք է պահպանվի»:[13]

Մելիքները ժողովը սկսելուց առաջ անհրաժեշտ են համարել նախ այցելել Գանձասարի կաթողիկոսին և ծանոթացնել նրան ձեռնարկվող գործի հետ և ստանալ նրա համաձայնությունը: Այդ նպատակով Սյունիքի մի քանի մելիքներ, Օրիին իենց հետ վերցրած, մեկնում են Ղարաբաղի Գանձասար: Այստեղ նրանք հանդիպում են դժվարությունների: Սկզբնական շրջանում Գանձասրի կաթողիկոսը, իմանալով մելիքների նպատակների մասին, ուրախանում է, ոգևորվում, սակայն, զրույցի ժամանակ, երբ խոսք է լինում դավանափոխության մասին, դրա շուրջն առաջանում են վեճեր: Երբ Օրին հայտնում է, որ կյուրֆյուրստը կուղարկի իր ծառայողներին և կաթոլիկ հոգևորականների, որպեսզի նրանք վերահսկողություն հաստատեն, սա տեղիք է տալիս դավանաբանակա վեճի: Օրին աշխատում է ապացուցել որ քրիստոնեական դավանքի մեջ ամենից ճշմարիտը կաթոլիկությունն է, և հայերը պիտի ճանաչեն պապի իշխանությունը: Իր կարծիքը ապացուցելու համար նա «Աստվածաշնչից» մեջբերումներ է անում, սակայն կաթողիկոսը և եպիսկոպոսները չեն համաձայնում: Դավանաբանական վեճը բորբոքվում է: Արդյունքի չհասնելով, մելիքների խորհրդով, Օրին բաց չի անում իր առաքելության մանրամասնությունները Գանձասարի հոգևորականների առջև և վերադառնում է Անգեղակոթ:

Նամակում, առաջին հերթին աշխատել են հավաստիացնել պապին, որ հայ ժողովուրդը համաձայնվել է կաթոլիկություն ընդունել, և դա որոշված է Էջմիածնի հեղինակավոր ժողովում:

Դժգոհություն է հայտնված հայ հոգևորականությունից, որոնք կաշառքի միջոցով պաշտոններ են հափշտակում իրարից:

Պապին, անշուշտ, հետաքրքրում էր այն հարցը, թե Հայաստանի իշխանները ինչ կարող են անել, եթե հայ լուսավորչական եկեղեցականները համառեն և չցանկանան կաթոլիկություն ընդունել, ինչպես նրանք վարվել էին դարեր շարունակ, որի հետ անծանոթ չէր Վատիկանը:

Օրիին դիրք, հեղինակություն տալու նպատակով անհրաժեշտ էր նրան ներկայացնել իբրև Պռոշյան ականավոր իշխանական տան շառավիղ, որը ընտրված և լիազորված է Էջմիածնի ժողովի կողմից իր հոր՝ Իսրայելի փոխարեն Եվրոպա

[13] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 50

մեկնելու և հայ ժողովրդի ազատագրության հարցով բանակցություններ վարելու համար:

Հայ ժողովրդի համար Արևմտյան Եվրոպայից զինական օգնություն ստանալու նպատակով պապին մի փաստաթուղթ է ուղարկվում:: Պապի վստահությունը շահելու համար նրան խնդրում էին, որ որպես Վատիկանի ներկայացուցիչ Հայաստան ուղարկվի Վիեննայի արքունիքի կապլան Ներսեսը, որը Օրիի ծանոթ անձնավորություններից է եղել[14]: Եվ այսպես, գրության հիմնական նպատակն է եղել պապի բարյացակամությունը շահելու համար բացասական տեսանկյունով ներկայացնել հայկական բարձրաստիճան եկեղեցականներին, իրենց հնազանդությունը հայտնել եկեղեցուն, մեծարել Իսրայել Օրիին որպես իշխանազարմ անձնավորության և կաթոլիկի:

Դիվանագիտորեն անթերի է կազմված նաև երրորդ՝ մելիքների կողմից Պետրոս Առաջինին ներկայացված դիմումը: Նրա մեջ ևս հաշվի են առնված դիվանագիտական բոլոր կարևոր նրբությունները:

Օրին հավաստիացրել է կյուրֆյուրստին, որ պատերազմի ժամանակ վրացիները հայերի հետ են լինելու:

Օրիի ներկայացրած ծրագիրը չքննարկվեց: Նրան վերջնականապես պարզ դարձավ, որ Եվրոպայում հույսեր չկան Հայաստանն ազատագրելու նախատեսված ծրագիրն իրականացնելու համար: Այդ ժամանակ է, որ Օրիի մոտ տեղի ունեցավ վերջնական հեղաշրջում. Հիասթափված եվրոպական պետությունների դատարկ խոստումներից՝ նա լիովին համոզվեց, որ հայ ժողովուրդը արևմտաեվրոպական արքունիքներից սպասելիք չունի, և նրա ազատագրության հեռանկարները վերջնականապես կարող են կապվել միայն Ռուսաստանի հետ, և ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա:

Օրին Մինաս վարդապետի , երկու քարտուղարների և թարգմանչի հետ Մոսկվա է հասնում 1701թ. հուլիսի 7-ին և դեսպանին պատշաճող մեծարանքով ընդունվում ցարական արքունիքում: Նրան հատկացվում է առանձին բնակարան, օրապահիկ և թիկնապահ պահակախումբ: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանը ջանքեր էր թափում ծովային նոր,հարմար ուղիներ տիրապետելու ուղղությամբ: Հետաքրքրություններից մեկը Սև և Ազովի ծովերի հետ էր կապված, որոնք գտնվում էին Թուրքիայի տիրապետության տակ: Կասպից ծովը Ռուսաստանի համար կարևոր էր, քանզի ճանապարհ էր հարթում դեպի Պարսկաստանի՝ մետաքսով և հումքով հարուստ տարածքները: Սակայն, այդ պահին Ռուսաստանի համար առաջնահերթը Բալթիկ ծով դուրս գալն էր: Այս նպատակով նա պատերազմ

[14] Ա. Գ. Աբրահամյան, «Իսրայել Օրի», Երևան, 1978, էջ 58

էր սկսել Շվեդիայի հետ; որին էլ պատկանում էին Բալթիկ ծովի՝ Ռուսաստանին շահագրգռող բոլոր ափերը: Եվ ահա Ռուսաստանի համար հենց այս ծանր պահին էր, որ 1701թ. հուլիսի 7-ին Օրին և իրեն ուղեկցողները հասան Մոսկվա:

Պետրոսին հարկավոր էին հաղթություններ, որովհետև հարկավոր էր Բալթիկ ծովը, բայց ոչ մի հաղթություն դեռ չէր տարել: Այսպիսի մի լարված դրության մեջ հայոց ներկայացուցիչը զորք էր խնդրում իր խեղճ հայրենիքի ազատության համար: Անհնարին էր, իհարկե, նման գործ սկսել, գեթ առայժմ: Բայց քանի որ հարցն Արևելքին էր վերաբերում, Պետրոսը չէր կարող միանգամայն անտարբեր մնալ: Նա վաղուց էր ըմբռնել, թե Ռուսաստանի բարեկեցության և տնտեսական առաջադիմության համար ինչ նշանակություն ունեն արևելյան և հարավային երկրները: Ահա այս պատճառով էր, որ Պետրոսն առանձին ուղադրություն դարձրեց Օրիի վրա:

- Օրին, իբրև քաղաքագետ մարդ, որ բանակցություններ էր վարում իր երկրի օգտի համար, շուտ ըմբռնեց, որ ռուսաց կառավարությունը չի կարող հասարակ գործակատարի դեր ստանձնել կուրֆյուրստի կամ նույնիսկ կայսրի համար այնպիսի մի ձեռնարկության մեջ, ուր շոշափվում էին նաև Ռուսաստանի շահերը, ուստի տեղափոխեց հարցի ամբողջ ծանրությունը Ռուսիա, նրան հանձնելով այն դերը, որ սկզբնական ծրագրով պետք է կատարեին կուրֆյուրստն ու կայսրը: Պետրոս I-ին հետաքրքրեց Օրու անձն ու առաքելությունը, և նա պահանջեց իրեն մանրամասն ծրագիր ներկայացնել Հայաստանի ազատագրության հնարավոր տարբերակների և այդ գործում Ռուսաստանին վերապահված դերի վերաբերյալ: 1701թ. հուլիսի 25-ին Օրին ցարական արքունիք է ներկայացնում ռուսական բանակի՝ դեպի Հայաստան կատարվելիք ռազմական արշավանքի հուշագիրը: Այն ստացել է <<Մոսկովյան ծրագիր>> անունը և բաղկացած է 18 կետերից: Ըստ Օրիի Մոսկովյան ծրագրի, ռազմական արշավանքի համար Ռուսաստանում կազմակերպվելու էր 25.000-անոց բանակ: Բանակի մի մասը՝ 15 հազար զինվոր, շարժվելու էր ցամաքային ճանապարհով՝ Թերեք-Դերբենտ ուղղությամբ: Մյուս զորագունդը՝ 10 հազար զինվորներով, ճանապարհվելու էր Կասպից ծովով: Նիզովայի նավահանգստում ափ իջնելուց հետո, ռուսական բանակը սրընթաց շարժվելու էր դեպի Գանձակ, Լոռի, Կապան, Նախիջևան: Նախիջևանում ռուսական զորքերին միանալու էին հայկական ապստամբական ուժերը (շուրջ100.000զինվորներ) և համատեղ սկսելու էին Հայաստանի ազատագրության ծրագրի իրականացումը: Հատվածի հիմնական ուղղությունը պետք է լիներ Երևանը, որը գրավելուց հետո, ավարտվելու էր Հայաստանի ազատագրումը վերականգնվելու էր հայկական պետականությունը:Ցարական արքունիքին

շահագրգռելու համար Օրին խոսել է նաև այդ վայրերի տնտեսական հարուստ կյանքի, մեծաշահ առևտրի մասին, որով հետաքրքրվում էր Ռուսաստանը: Մոսկովյան ծրագրում ոչ մի խոսք չկա հայ ժողովրդի դավանափոխության՝ կաթոլիկություն ընդունելու մասին, մի հարց, որը շեշտադրված էր Դյուսելդորֆյան ծրագրում: Ցարական արքունիքը ոչ մի նշանակություն չէր տալիս դավանական հարցերին: Ծրագիրը հետաքրքրեց Պետրոս I-ին: Ցարը որոշակիորեն հայտնեց, որ ինքը կընդառաջի հայերի դիմումին, որը հնարավոր կլիներ, սակայն, միայն Հյուսիսային պատերազմի ավարտից: հետո:

2. Իսրայել Օրին և հայ ազատագրական շարժումները

Ազատագրական գաղափարների տարածման գործում մեծ էր Իսրայել Օրու դերը: Նրա հայրը՝ Մելիք Իսրայելը, Էջմիածնի (1677թ). ժողովի կազմակերպիչներից էր, ընդգրկված էր Հակոբ Ջուղայեցու պատվիրակության մեջ և իր հետ Եվրոպա էր տանում նաև որդուն: Կ. Պոլսում(1680թ). Հակոբ Ջուղայեցին մահանում է և պատվիրակությունը ցրվում է,սակայն Իսրայել Օրին չի վերադառնում հայրենիք: Նա մեկնում է Իտալիա,ապա հաստատվում Փարիզում:Այնտեղ զբաղվում էր առևտրով:Մասնակցում է անգլո—ֆրանսիական պատերազմին, որի ժամանակ գերի է ընկնում անգլիացիների մոտ: Գերությունից ազատվելուց հետո մեկնում է Գերմանիա, հաստատվում Հռենոսյան Պֆալց իշխանության կենտրոն՝Դյուսելդորֆ քաղաքում: Այնտեղ Օրին ծանոթանում է Պֆալցի կուրֆյուրստ (կայսրընտիր իշխան) Հովհան Վիլհելմի հետ ,և քանի որ նրան շահագրգռում էր Հայաստանի ազատագրության հարցը ՝ նրան առաջարկում է դառնալ Հայոց թագավոր: Վիլհելմը տալիս է իր համաձայնությունը, բայց պահանջում է, որ հայերի կողմից այդ մասին լինի գրավոր դիմում: 1699թ. Իսրայել Օրին ճանապարհվում է Հայաստան: Նա Կ. Պոլսում հանդիպում է Հայոց պատրիարքի հետ, ապա Կարինի վրայով հասնում Էջմիածին: Նահապետ կաթողիկոսը անբարյացակամորեն ընդունում է նրան: Օրին մեկնում է Սյունիք եւ իր ծրագրերով ոգևորում Մելիք Սաֆրազին: 1699թ. ապրիլին Օրու եւ Մելիք Սաֆրազի նախաձեռնությամբ Անգեղակոթում հրավիրվում է հայ մելիքների ժողով, որտեղ Օրին ներկայացնում է Հովհան Վիլհելմի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագիրը: Մելիքները համաձայնվում են օգնության դիմած Հովհան Վիլհելմեցուն ճանաչել Հայոց թագավոր: Նրանք նամակներ գրեցին եվրոպական տիրակալներին, Հռոմի պապին, ռուսական ցարին: Մինաս վարդապետ

Տիգրանյանին որպես օգնական վերցնելով, Օրին 1699թ. Վերադառնում ք Դյուսելդորֆ:

Մինչ Հովհան Վիլհելմի հետ հանդիպելը Օրին եւ Մինաս վարդապետը կազմում են Հայաստանի ազատագրության ծրագիր: Ըստ դրա, Հայաստանը պետք է ազատագրվեր Եվրոպայում կազմավորված բանակի միջոցով: Պետք է ստեղծվեր եռյակ միություն՝ Ավստրիայի կայսր Լեոպոլդ Ի-ի, Հովհան Վիլհելմի եւ Տոսկանայի դուքս Կոզմաս III-ի մասնակցությամբ: Նրանց բանակը պետք է անցներ Ռուսաստանի տարածքով, որն Ավստրիայի հետ ընդգրկված էր հակաթուրքական կոալիցիայի մեջ, ապա Կասպից ծովի վրայով մտներ Անդրկովկաս, որտեղ նրանց էին միանալու ապստամբած հայերն ու վրացիները: Նախատեսվում էր 20-25 օրում ազատագրել ամբողջ Արևելյան Հայաստանը, քանի որ թուլացած Իրանը չէր կարողանա դիմադրել այդ ուժերին: Այս ծրագրում Օրին դիվանագիտական նկատառումներով գերագնահատել էր հայերի ուժերը և թերագնահատել պարսիկներինը: Ապա պետք է ազատագրվեր նաև Արևմտյան Հայաստանը: Վերոնշյալ պետությունները հակաթուրքական կոալիցիայի մեջ էին,և Օրու կարծիքով ծրագիրը կարող էր հեշտությամբ իրականանալ, սակայն 1699թ. Կարլովիցիում Ավստրիան հաշտություն, իսկ Ռուսաստանը զինադադար կնքեցին թուրքերի հետ, որով խնդիրը բարդացավ: 1700թ. Օրին և Մինաս վարդապետը այս ծրագիրը ներկայացրին Հովհան Վիլհելմին, որը տվեց իր համաձայնությունը և նրանց ուղարկեց Վիեննա և Ֆլորենցիա՝ Լեոպոլդ Ի-ի եւ Կոզմաս III-ի համաձայնությունը ստանալու համար: Վերջինս տվեց իր համաձայնությունը, իսկ Լեոպոլդը քաղաքական իրադրության պատճառով մերժեց ծրագիրը: Այսպիսով, Օրու ծրագիրը տապալվեց[15]:

Վիեննայում Օրուն հասկացրին, որ նրան կարող է օգնել Ռուսաստանի տիրակալ Պետրոս Մեծը: Ուստի Օրին Մինաս վարդապետի հետ որպես Հովհան Վիլհելմի պատվիրակ մեկնեց Մոսկվա: Նա 1701թ. հանդիպեց ռուսական կանցլեր Գոլովինի, ապա Պետրոս Մեծի հետ: Օրին ներկայացրեց ազատագրության նոր ծրագիր, որով նախատեսվում էր կազմել 25.000-ոց բանակ, որից 10.000-ը Դերբենդի կիրճով և Կասպից ծովով, իսկ 15.000-ը՝ Դարիալի կիրճով պետք է մտներ Անդրկովկաս: Անդրկովկասում նրանց կմիանային վրացական և հայկական զորքերը: Օրին համոզված էր, որ միայն արևելահայերը կարող էին դուրս բերել ավելի քան 100.000 զինվոր: 1702թ. Օրուն հայտնեցին, որ շվեդների դեմ մղվող Հյուսիսային պատերազմի ավարտից հետո Պետրոս Ի-ը վճռել է օգնել հայերին: Պետրոսը որոշեց Իրանում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով դեսպանություն ուղարկել, որի ղեկավար նշանակեց Իսրայել Օրուն, նրան տալով գնդապետի աստիճան: 1704թ.

[15] Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:/Երևան 2012 թ.,էջ 204-206:

Օրին ուղևորվեց Դյուսելդորֆ, Հովհան Վիլհելմի միջոցով ձեռք բերեց Պարսից շահին ուղղված Հռոմի պապի նամակը՝ ի պաշտպանություն քրիստոնյաների, ինչպես նաև 20.000 ռուբլու զենք գնեց ու 1706թ. վերադարձավ Մոսկվա: Նա մտադիր էր գնված զենքով Աստրախանում հայերից մի գունդ կազմավորել: Օրին վերցրեց նաև Պետրոս I-ի նամակը և 1707թ. հունիսին Կասպից ծովով սկսեց ճանապարհորդությունը: 1708թ. Շամախիում տեղի խանը փորձեց խոչընդոտել Օրու ուղևորությունը, քանի որ Անդրկովկասում լուրեր էին տարածվել, որ նա հայոց թագավորն է և գալիս է իր երկիրն ազատագրելու: Սակայն պարսիկները չհամարձակվեցին երկար կանգնեցնել Ռուսաստանի ցարի և Հռոմի պապի պատվիրակին: 1709թ. նա հասավ Սպահան, հանդիպեց շահին և նույն թվին վերադարձավ Անդրկովկաս, որտեղ մնաց մինչև 1711թ.: Այստեղ նա մեծ ջանք գործադրեց ռուսական կողմնորոշումը ամրապնդելու, հայկական ուժերը համախմբելու և ապստամբության նախապատրաստելու համար: Կապեր հաստատեց Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան—Ջալալյանի, Էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու հետ[16]:

1711թ. Օրին Եսայի Հասան—Ջալալյանի հետ ճանապարհվեց Ռուսաստան, սակայն Աստրախանում հանկարծամահ եղավ: Իսրայել Օրին մեծ դեր կատարեց 17-18-րդ դդ. հայ ազատագրական շարժման պատմության մեջ, նոր փուլի հասցնելով ազատագրական պայքարը: Օրին Հայաստանի ազատագրության հարցը բանակցային ճանապարհից փոխադրեց գործնական հողի վրա, փորձեց համախմբել ու համընդհանուր ապստամբության նախապատրաստել հայկական ուժերին, գործնական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի հետ: Նրա մահը լուրջ հարված էր հայ ազատագրական պայքարին, քանի որ Օրին իր դիվանագիտական տաղանդով, գործնականությամբ ու անսպառ եռանդով անփոխարինելի գործիչ էր և կարող էր համախմբել հայության ուժերը:

[16] Սիմոնյան Ա., Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ., էջ 247:

Եզրակացություն

Իսրայել Օրին հայ ժողովրդի անզուգական դեմքերից մեկն է: Նրա շնորհիվ հնարավոր դարձավ հաստատուն հողի վրա դնել հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները: Նա ջանք ու եռանդ չխնայեց Հայաստանի ազատագրությունը իրականություն դարձնելու համար: Դժբախտաբար Օրին իր գործունեությունը սկսեց մի ժամանակաշրջանում, երբ Եվրոպական երկրները արդեն հետաքրքրված էին Արևելքում տեղի ունեցող իրադարարձություններով և ցանկանում էին ազդեցության գոտիներ ստեղծել իրենց համար: Այս պարագայում նրանց համար արդեն առաջնային էին դառնում իրենց սեփական շահերը, և մի խեղճ ժողովրդի փրկությունը նրանց հեռահար ծրագրերի մեջ չէր մտնում: Օրին այդպես էլ չտեսավ իր երազանքի իրականացումը: Սակայն նրա գործը դեռ ավարտված չէր: Հայրենիքի նվիրյալի գործը շարունակեց նրա հավատարիմ բարեկամը և ուղեկիցը՝ Մինաս վարդապետը, ով շարունակում էր կապեր պահպանել ռուսական արքունիքի հետ և Հայրենիքի փրկության ելք էր որոնում:

Հյուսիսային պատերզմի ավարտից հետո Պետրոս Առաջինը, այնուամենայնիվ, կատարեց Օրիին տված իր խոստումը և կազմակերպեց «պարսկական» կոչվող արշավանքը: Բայց 18-րդ դարում չկային նպաստավոր պայմաններ՝ իրականացնելու ռուսական արքունիքի հանձնառությունը՝ օգնելու հայ ժողովրդի ազատագրությանը:

Դրանից հետո դեռ հարկավոր եղավ ավելի քան մեկ դար, մինչ որ հնարավոր եղավ իրագործել պարսկական լծի թոթափումը Արևելյան Հայաստանից: Իսկ դրանից հետո հարկավոր եղավ սպասել մեկ դարից քիչ պակաս ժամանակ, որպեսզի նոր ժամանակում տեղի ունենար հայ ժողովրդի համար դարակազմիկ նշանակություն ունեցող իրադարձությունը՝ հայ պետականության ստեղծումը:

Այսպիսով, Իսրայել Օրին հայ ազգային–ազատագրական շարժման գործիչ է, ով ծագում էր Պռոշյանների իշխանական տոհմից: Իսրայել Օրու գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել ժամանակի ազգային-ազատագրական պայքարի գաղափարների ձևավորման հարցում: Օրին հիմնել է պայքարի ռուսական կողմնորոշումը: Սյունիքում և Արցախում ունենալով գաղափարակիցներ՝ նա արմատավորեց Հայաստանի ազատագրության գաղափարը նրանց մեջ: Արդյունքում իր մահից մեկ դար անց Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը: Ռուսական կայսրությանը միացված հայկական հողերի վրա ստեղծվեց հայկական երկու պետականություններ՝ Հայաստանի Հանրապետություն ու Արցախի Հանրապետություն: Արդի իրավիճակում նույնպես ունենք դժվարին պայքարի ու գոյության պահպանման խնդիր: Ներկա պայմաններում ազգային-ազատագրական պայքարի և ոչ միասնական գաղափարախոսության արդյունքում կանգնել ենք լուրջ

հարցերի առաջ: Ինչպես Իսրայել օրու ժամանակաշրջանում, այնպես էլ այսօր, ՀՀ-ն իր գոյության պահպանման համար դիմել է Ռուստաստանի Դաշնության և Եվրոպայի օգնությանը, որը դրական արդյունք չի ունենում:Անցյալի դասերը ներկայում պետք է սերտել ու հավատացնել սեփական ժողովրդին ,որ միասնության և սեփական ուժին հավատալու շնորհիվ մենք կարող ենք հասնել սպասված արդյունքին: Ինչպես նկատում ենք, ՀՀ-ն և անցյալում, և՛ ներկա պայմաններում պետք է հիմնվի սեփական ուժերի և խելացի դիվանագիտության վրա, հիմնվի սեփական բանակի կայունացման ու հզորացման վրա և ակնկալիք չունենա դրսի օգնությունից: Մենք՝հայերս, այսօր ունենք Իսրայել Օրու պես խելացի դիվանագետի և հզոր հայի տեսակի կարիք և հավատում ենք,որ այսօր մեր սերնդին դաստիարակելով Օրու վեհ ու անձնվեր օրինակով,կհասնենք Հայաստանի հզորացմանն ու շենացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա. Գ., «Իսրայել Օրի», Երևան, 1978.
2. Բագրատ Ուլուբաբյան, «Զրուցարան», Երևան, 1987.
3. Լեո, «Հայոց պատմություն» , երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան 1973.
4. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիա, «Հայ ժողովրդի պատմություն», հատոր IV.
5. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:/Երևան 2012 թ.
6. Հովհաննիսյան Ա. Գ., «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից», գիրք Բ, Երևան, 1959.
7. Պողոսյան Ս.Գ., «Հայ ժողովրդի պատմություն», հատոր II.
8. Սիմոնյան Ա., Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.
9. Քյուրտյան Յ., «Իսրայել Օրու պատմաքննական ուսումնասիրությունը», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1960.